Դասընթացի պլան
1C ծրագրավորում

Բովանդակություն

1. Կառուցվածք և նկարագիր
2. Նպատակ
3. Հիմնական նյութեր
4. Օժանդակ նյութեր
5. Թեստավորում
6. Գնահատման համակարգ
7. Դասընթացի ժամանակցույց
8. Կոնտակտային տվյալներ

Կառուցվածք և նկարագիր

Դասընթացն բաղկացած է 3 փուլից: Առաջին փուլում մասնակիցները ծանոթանալու են 1C ծրագրավորման հիմունքներին, որոնք լինելու են տեսական բնույթի ինֆորմացիա, ցուցադրական օրինակներ և «տնային» առաջադրանքներ: Տվյալ բլոկն ավարտելու համար անհրաժեշտ կլինի հանձնել համապատասխան թեմաները ներառող թեստը:

Երկրորդ փուլում, բացի տեսական նյութերից, մասնակիցների հետ օնլայն աշխատելու է 1C ընկերության ներկայացուցիչը: Տվյալ փուլն անցնելու համար անհաժեշտ կլինի հանձնել նախատեսված քննությունը: Ինչպես նաև անցկացվելու է 1C հաշվապահության դասընթաց, որն ավարտելու համար ևս անհրաժեշտ կլինի հանձնել համապատասխան թեստ:

Երրորդ փուլում կիրականացվեն մասնագիտական ուսումնասիրություններ, կտրվեն պրակտիկ խնդիրներ, ծանոթություն տվյալների կարգավորման համակարգի հետ (система компановки данных), ինչպես նաև իրականացվելու է մասնագետի (специалист) քննություն հանձնելու պատրաստություն:

Նպատակը

Դասընթացի հիմնական նպատակն է.

- Պատրաստել ծրագրավորման ոլորտի գրագետ մասնագետներ
- Սերմանել ոլորտին հարիր աշխատանքային կուլտուրա
- Լավագույն առաջադիմությունը ցուցաբերող մասակիցներին ապահովել աշխատանքով
- Բարձրացնել ՀՀ-ի և ԱՀ-ի բիզնեսների ավտոմատացման մակարդակը
- Հնարավորինս արագ և որակով լուծել բարդագույն բիզնես պրոցեսների ավտոմատացման խնդիրներն:

Դասընթացը նախատեսված է այն անհատների համար, ովքեր ունեն.

- Սովորելու պատրաստակաություն
- Հետաքրքիր աշխատանք ունենալու ցանկություն
- Տնտեսության բոլոր ճյուղերի աշխատանքային նրբություններին ծանոթանալու ցանկություն
- Մշտական մասնագիտական աճ ունենալու ցանկություն
- Ընկերական և պրոֆեսիոնալ թիմում աշխատելու ցանկություն:

Հիմնական նյութեր

Դասընթացն անցկացվելու է 1C ընկերության կողմից ստեղծված հատուկ կուրսով, որը նախատեսված է 1C ծրագրավորման լեզվին ծանոթանալու և, վերջինիս միջոցով, աշխատանքային պրակտիկ խնդիրներ լուծելու հմտություններ ձեռք բերելու համար:

Օժանդակ նյութեր

Դասընթացի շրաջանակներում մասնակիցներին կտրվեն նաև քեյսեր և խնդիրներ՝ կազմված հենց Infoexpert ընկերության կողմից: Վերջիններս հիմնված են իրական ձեռնարկությունների բիզնես պրոցեսների վրա:

Թեստավորում

Դասընթացն ավարտելու համար անհրաժեշտ է հանձնել 1C ընկերության կողմից կազմված մասնագիտական թեստը, որը ներառելու դասապրոցեսի ընթացքում

քննարկված բոլոր թեմաներն՝ տեսական հարցերի տեսքով, ինչպես նաև՝ որոշ խնդիրներ:

Գնահատում

Մասնակիցները գնահատվելու են հետևյալ համակարգով.

- Ներկայություն - 5%
- Մանսակցություն, ակտիվություն, հարցերի դուրս բերում և քննարկում - 20%
- Տնային առաջադրանքներ - 20%
- Ինֆոէքսպերտի խնդիրներ - 20%
- Ավարտական թեստ - 35%

Վերոնշյալ բոլոր կետերին հիմնվելով՝ ամենաբարձր առաջադիմություն ցուցաբերող մասնակիցները հնարավորություն կստանան միանալու Infoexpert ընկերության թիմին:

Դասընթացի ժամանակացույց

Դասընթացն անցկացվելու է շաբաթական 3 անգամ՝ 90 րոպե տևողությամբ, որից հետո մասնակիցներին կտրվեն առաջադրանքներ (տնային կամ օժանդակ նյութ), որոնք պետք է կատարվեն տեղում (առավելագույնը 45 րոպե տևողությամբ): Մասնակիցներին հնարավորություն կտրվի լսարանի ազատ ժամանակահատվածում ևս անցկացնել դասերը:

Դասերի օրերն ընտրվում են խմբի մասնակիցների զբաղվածությանը համապատասխան:

Կոնտակտային տվյալներ

Մասնակիցներն իրենց մասնագիտական հարցերը կարող են ուղղել Լիանա Ավետիսյանին (Infoexpert ընկերության ծրագրավորման բաժնի ղեկավար):

Email: avetisyanliana@infoexpert.am

Աշխատանքային ժամերը ՝ ըստ պայմանավորվածության:

Իսկ կազմակերպչական հարցերով կարող են դիմել Զառա Գրիգորյանին (Infoexpert ընկերության զարգացման գծով պատասխանատու):

Email: grigoryanzara@infoexpert.am ; zaruhigrigoryan06@gmail.com

Tel: +374 99 21 00 81

Աշխատանքային գրաֆիկ՝ երկուշաբթի - ուրբաթ ժամը 11:00-18:00

Հարգանքով՝

Infoexpert

Հասցե ՝ Տերյան 25, բն. 6

Հեռ. ՝ +374 60 53 03 61, +374 99 53 33 61

Email: info@infoexpert.am